


Սուրիոյ նախագահ Պաշտապ Սաադ Ե. Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պրն Ապտէլ Ապի Շարաթ օր Դամասկոսի մէջ տեսակցութիւն մը ունեցած են՝ կեդրոնականացուցած իրաքի եւ պաղեստինեան հողամասերուն վրայ գոյութիւն ունեցող կացութեան վրայ: Անոնք քննարկած են միջոցներ «արաբական պարակցութեան վերահաստատումին համար» իրաքի եւ պաղեստինեան հարցին առնչութեամբ միացեալ կեցուածքի մը լաւագոյն նպատակով: Հանդիպումին ընթացքին որոշուած է 11 Օգոստոսին (այսօր) Գահիրէի մէջ կայացնել հանդիպում մը, մասնակցութեամբ Սուրիոյ եւ Սէուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարարներուն, քննարկելու համար իրաքի իրաւիճակը եւ պաղեստինեան տագնապի վարգաւորումները: (ԱՅՓ)

ՀՐԶՊԱԼԼԱ ՀԱԿՕԴԱՅԻՆ ՀՐԹԻՌՆԵՐՈՎ ԿԸ ՊԱՍԱՍԽԱՆԷ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴՈՒԺԸ ԿԸ ՌԱԲԱԿՈՇԷ ԹԱՅՐ ԸԱՐՖԱ ԳԻՒՂԱՔԱՂԱՔԸ

Նախանցեալ Ուրբաթ օրուան ընթացքին տեղի ունեցած Լիբանան - Իսրայէլ սահմանային միջադէպերը շարքաւորելու համար Լիբանանի եւս պարզացան երբ իսրայէլացի զինուորական բանքեր մը յայտնեց, թէ Հըզպալլայի հետ զինեալ բախումներու իբրեւ հետեւանք զոն գացած է իսրայէլացի մը եւ վերադարձուած են հինգ ուրիշներ, իսրայէլեան Շլոմի բնակեցման վայրին մէջ (հիւսիսային Իսրայէլ):



«Հարաւային Լիբանանէն իսրայէլեան ուժերու հետեւանք երբ տարի ետք առաջին անգամ ըլլալով է, որ իսրայէլացի մը կը մահանայ դիմադրութեան կողմէ արձակուած հրթիռներու պատճառով, որովհետեւ Հըզպալլայի հակօդայինները չեն պատճառած անոր մահը, այլ՝ երբ «Քաթիուշա» տիպի հրթիռները, ըսաւ իսրայէլեան կառավարութեան մէկ բանքերը: Իսրայէլեան ադրիւրները նշեցին, որ «Իսրայէլեան կողմը կազմ ու պատրաստ է հակադարձելու Լիբանանի կողմէ կատարուելիք որեւէ յարձակում»:

Իսրայէլեան կառավարութեան բանքեր Ալի Փապանէր յայտնեց, որ Հըզպալլային կողմէ կատարուած նշեալ նախարարականներուն դիմաց իսրայէլ լուր պիտի չկանգնի եւ շեշտեց, որ Իսրայէլ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդէն պիտի խնդրէ արտակարգ ծողով մը գումարել քննարկումի ենթարկելու համար հարաւային Լիբանանի կացութիւնը: Լիբանանեան բա-

նակը իր կարգին երէկ յայտարարեց, որ իսրայէլեան օդուժը երէկ զարմուտեց են Հըզպալլայի հակօդայիններու սարքեր եւ յաւելեալ չորս հրթիռներ արձակած են Մուզլիմ շրջանին վրայ: Միւս կողմէ, Հըզպալլա հերքեց իսրայէլի կողմէ կատարուած այն յայտարարութիւնը, թէ իսրայէլացի քաղաքացիներ վիրաւորուած են Հըզպալլայի կողմէ արձակուած «Քաթիուշա» տիպի հրթիռներուն պատճառով եւ ոչ՝ հա-

կօդայիններուն իբրեւ հետեւանք: Իսրայէլեան օդուժը թռիչքներ կատարեց նաեւ երէկ կէսօրէ առաջ Նաբուրայէն մինչեւ Սուր երկարող տարածքին վրայ: Հըզպալլա իր կարգին յայտնեց, թէ դիմադրութիւնը հակօդայիններով փոխադարձ է իսրայէլեան օդուժի թռիչքներուն: Իսրայէլեան պաշտպանութեան փոխ նախարար Չէիֆ Պոնէ իսրայէլեան ճայնասփիռնի կայանի մը ըսաւ, որ Հըզպալլայի կողմէ խորամանկութիւն է հակօդայինները պատճառաբանելով քաղաքացիներուն վրայ հրթիռներ արձակելը եւ աւելցուց, որ Իսրայէլ չի փափաքիր պատերազմի նոր ձեւեր մը ստեղծել Լիբանանի հետ: Ան աւելցուց սակայն, որ չ'ուզէր նաեւ, որ իսրայէլացի քաղաքացիներ վիրաւորուին: Իսրայէլի արտաքին գործոց նախարար Միլլան Շալոմ Իրանը, Լիբանանն ու Սուրիան պատասխանատու նկատեց Լիբանան - Իսրայէլ սահմանային «կապուտ Գիծ» խախտումները: Ծարը՝ էջ 3

ԹՈՒՐԵՒԱ ՊԵՏՔ Է ԾԱՆՉՆԱՅ ԴԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Շարաթ, 9 Օգոստոսին ընդունեց Միացեալ Նահանգներու Քոնկրէսի անդամ Ճոզէֆ Քրաուլին, որ Հայաստան կը գտնուի Հ. Յ. Դ. ի հրաւերով: Կողմերը քննարկեցին հայեւամերիկեան գործակցութիւնը, շրջանային պարզացումներու եւ դրացի երկիրներու հետ Հայաստանի յարաբերութիւններուն առնչուող հարցեր: Անոնք անդրադարձան նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին: Լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին Քրաուլի անդրադարձաւ հայ - թրքական յարաբերութիւններուն, նշելով, որ ինքը այդ հարցը քննարկած է երկու երկիրներու կառավարութիւններու ներկայացուցիչներուն հետ: Ան կարծիք յայտնեց, որ հայ - թրքական յարաբերութիւնները հապաք կը բարելաւուին, եթէ Թուրքիա ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը: «Թէեւ Հայաստան Հայկական Յեղասպանութեան ճանաչման հարցը նախապայման չի նկատեր հայ - թրքական յարաբերութիւններու բնականոնացման համար, այսուհանդերձ չեմ կարծեր, որ յարաբերութիւնները կը պարզանան երբ կողմերէն մէկը անկեղծ է ապնուի», դիտել տուաւ Քրաուլի: Ան յայտնեց, որ Քոնկրէսի անդամներ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութենէն պահանջած են մնջում բանեցնել Թուրքիոյ վրայ, որպէսզի ՄԱԿ-ը անկեղծ Հայաստանի հանդէպ իր կեցուածքը, ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը, նաեւ՝ վերաբանայ հայ - թրքական սահմանը: Ճոզէֆ Քրաուլի Հայաստանի մէջ ցարդ հանդիպումներ ունեցած է Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանի, Ազգային Ժողովի փոխ նախագահ Ե. Յ. Դ. Քիրոնի անդամ ընկ. Վահան Յովհաննիսեանի եւ իշխանամէտ ու ընդդիմադիր կուսակցութիւններու ղեկավարներու հետ:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻՔ ԽՍՏՕՐԷՆ ԿԸ ԴԱՏԱ ՊԱՐՏԵՆ ՆԱ ՊԼՈՒՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Պաղեստինեան իշխանութեան վարչապետ Մահմուտ Ապպաս երէկ Հըզպալլայի հակօդայիններու հետ խորհուրդ մը մէջ յայտնած է, թէ իսրայէլ պատասխանատու պիտի ըլլայ պաղեստինեան խմբակներու կողմէ Յուսիս 29ին յայտարարուած զինադուլին ձախողութեան: Այս յորդանանեան արհմարտի իր յարձակումին պատճառով: Մէտուական Արաբիոյ Ծահտ թագաւորին հետ տեսակցութեան մը ետք, Ապպաս Շարաթ իրիկուն մամուլը ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ իսրայէլ անցնող քանի մը օրերուն եւ մանաւանդ անցեալ Ուրբաթ օր շարունակած է իր ներխուժումները, սպանութիւնները եւ քանդումները, «ինչ որ զայն պատասխանատու կը դարձնէ հետեւանքներուն»:



Նապոլու ներխուժումին ընթացքին սպանուած են 4 պաղեստինցիներ, որոնց կարգին Համասի երկու անդամներ: Անիկա Յուսիս 29ին ի վեր իսրայէլեան ամէնէն արհմարտի գործողութիւնն էր: Համասի զինեալ թեւը յայտարարած է, թէ սպանութիւնները անպատիժ Անոնք իրենց գայրոյթը արտայայտած են իսրայէլի դէմ, մինչ Ռամալլայի մէջ պաղեստինցի պաշտօնատարներ՝ սկսած նախագահ Եսսէր Արաֆատէն, վարչապետ Արիէլ Շարոնի կառավարութիւնը կը դատապարտէին: Արաֆատ թղթակցեց իր ըսած է, որ իսրայէլացիք «ոչ միայն զինադուլը թունաբարած են, այլ անոնք փորձած են ընդհանուր առմամբ խաղաղութեան գործընթացը քանդել», հիւսիսային Այսր-յորդանանի եւ այլ վայրերու մէջ զինուորական գործողութիւնները շարունակելով: Պաղեստինցի պաշտօնատարներու համաձայն, Համաս յայտարարած է, թէ պիտի չհակադարձէ Ուրբաթ օրուան գործողութեան: Սակայն մշակուած նախարար Զիադ Ապու Ամր, որ զինեալ պայքարի դիրքած իմրականներուն հետ պաղեստին-

ԱՐԻԷԼԱԻ ԲԱՆՈՒՄՆԵՐ ՊԱՍՐԱՅԻ ՄԷՋ

ԻՐԱՔԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԶԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԳԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐՈՒ ԳԷՄ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԵՍՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Իրաքի մէջ արհմարտի ղեկավարը առօրեայ հերթականութեամբ կը շարունակուին: Հարաւային Պասրաքաղաքին մէջ երէկ յաջողաբար երկրորդ օրն ըլլալով խուժուածութիւններ ծայր տուած են, երբ բրիտանական ուժերը կրակոցներու ենթարկուած են, մինչ կը փորձէին հակակշիռ տակ պահել բնակիչներ, որոնք գայրացած էին դաշնակիցներու կողմէ հիմնական սպասարկութիւնները վերահաստատած չըլլալուն համար: Բրիտանական ուժերու մէջ բանքերը Չարլի Մէյօ ըսած է, թէ մարդկային վնասներ չեն արձանագործուած, դիտել տալով, որ հարցը վառելանիւթի եւ ելեկտրականութեան տագնապին կը վերաբերի: Լրատու աղբիւրներ այսուհետեւ հարցը յայտնեցին, որ բրիտանական ընթացքին սպանուած է իրաքցի մը: Շարաթ օր քանի մը հարցր Նոզի անիւներ արած է ու քարեր արձակած բրիտանական ուժերուն վրայ, որոնք հակադարձած են ձգարիժով փամփուռներ արձակելով անոնց վրայ: Առնուազն 7 զինուոր եւ իրաքցի 4 քաղաքացի վիրաւորուած է ղեկավարութեան ղեկավարութեան: Պենզիին 20 իրթրի սա-կերը 150 տինարէն (10

սենթ) 12 հարցար տինարի (8 տոյար) բարձրացած են շրջանի մը մէջ, ուր վառելանիւթի մաքսանենցութիւնը բարգաւաճած է: Միւս կողմէ, երէկ Պաղ-

արձակուած ձեռնառումը մը պայթումին պատճառով 10 իրաքցի եւ ամերիկացի երկու զինուոր վիրաւորուած են: Անոնց շարքին է 11 տարեկան պա-

գտնուող Պաքուպա քաղաքին մէջ շիբ բարձրատիճան կղերական մը ձեռք բերուած է Շարաթ գիշեր ամերիկեան ուժերուն կողմէ, որոնք նաեւ այլ 12 անձեր ձեռք բերուած են: Ալի Ապտէլ Քարիմ Մատանի նախապէս Յուսիս 29ին 4 ձեռք բերուած էր: Այդ ձեռք բերուած թիւը դուռ բացած էր ցոյցերու, որոնց ընթացքին խորհրդաւոր պայթում մը գոհ մը խլած էր: Ամերիկեան բանակին մէջ բանքերը երէկ ըսաւ, որ հիւսիսային Պալմիրա քաղաքին մէջ ամերիկեան խաբիսի մը վրայ յարձակում մը տեղի ունեցած էր, ամերիկեան ուժերը Շարաթ գիշեր երեք կասկածելիներ ձեռք բերուած են: Իսկ ամերիկեան կեդրոնական հրամանատարութիւնը Շարաթ օր յայտնած է, թէ օր մը առաջ ձեռք բերուած է ներքին գործոց նախկին նախարար Մահմուտ Տիպպ Ահմէտ, որ Ուաշինկթընի կողմէ հետապնդուած նախկին 55 պաշտօնատարներէն մէկն էր: Շարաթ օր ամերիկացի զինուոր մը սաստիկ տաքին գոհ գացած է: Ան կը ճամբորդէր հարաւային Իրաքի մէջ, ուր շեքմատիճանը յաճախ 50 սաստիճան սելֆուսի կը հանի:

ԴԻՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՍԱՍԿԱՑՆԷ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ



Իրաքեան դիմադրութեան խմբակցութիւն մը երէկ խոստացաւ սաստիկացնել ամերիկեան ուժերու դէմ յարձակումները: «Ժպտիւր» արբանեակային կայանէն սփռուած տեսաերկի մը մէջ խմբակցութիւնը հերքեց այն պնդումները, թէ իրաքեան դիմադրութիւնը կապ ունի նախկին վարչակարգին հետ: Օգոստոս 3ին արձանագործուած այս ժապաւենին մէջ կ'երեւին չորս զինեալներ: Խմբակցութեան անունով խօսող զինեալը շեշտեց, թէ նախկին վարչակարգի մնացորդացը ատակ չէ օտար ուժերուն դիմադրելու, դիտել տալով, որ հակառակ պարագային «Պասա» կուսակցութեան վարչակարգը շուտով պիտի չտապալի:

տատի համալսարանին համակարգի մասնակցի մը տաք ղաշնակից ուժերուն վրայ տանի մը: Մինչ այդ, Պաղտաստի հիւսիսարեւմուտքը

ԽՆՐԱՅԷԼԻ ՅԱՐԶԱԿՈՂԱՊԱՇՏ
ԸՆԴՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈԿ

ԼԻԲԱՆԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԳԻՐ ՊԵՏԻ ՅՂԵ ՄԱԿԻՆ

Արտաքին գործոց և արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարութեան մէջ բանբերը երէկ յայտնեց, որ Լիբանանն որոշած է ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին բողոքագիր մը ներկայացնել, բողոքելով Իսրայէլի դէմ, անոր կողմէ կատարուելիք յարձակումներուն, շարունակական սպառնալիքներուն, օդային սահմանի խախտումներուն և լիբանանեան գերիշխանութեան հեզանքին գծով: Ան նշեց, որ Իսրայէլի նախարարակազմի քաղաքականութիւնը սահմանային «Կապոյտ Գիծ»ը խախտելուն մէջ նպատակ ունի պատերազմի նոր ճակատ մը ստեղծել հարաւի մէջ:

Նշեալ որոշումը տրուեցաւ նախագահ Վոր. Էմիլ Լահուուի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի և արտաքին գործոց և արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտի միջեւ տեղի ունեցած երկար խորհրդակցութիւններու իբրեւ արդիւնք:

Նշենք, որ ՄԱԿի մէջ Լիբանանի մնայուն ներկայացուցիչ Հուսամ Տիպպի պիտի ներկայացնէ բողոքագիրը, որ կ'ընդգրկէ նաեւ տեղեկութիւններ հարաւային Լիբանանի վրայ կատարուած իսրայէլեան բոլոր յարձակումներուն, սահմանային խախտումներուն ու պատճառած նիւթական վնասներուն մասին:

Նախարար Օպէյտ որոշեց նաեւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի մնայուն անդամ պետութիւններու Լիբանանի ներկայացուցչութիւններու ղեկավարները կանչել ժողովի մը, վանոնք տեղեակ պահելու համար հարաւային Լիբանանի կացութեան և սահմանային կայունութիւնը խախտելու իսրայէլեան շարունակական փորձերուն և սպառնալիքներուն մասին:

Միւս կողմէ, Օպէյտ երէկ հեռագրային հաղորդակցութիւն մը ունեցաւ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Ֆարուք Շարէիի հետ, քննարկելու համար Լիբանան - Իսրայէլ սահմանի վրայ արձանագրուած խախտումներն ու պարզացումները:

Իր կարգին, Շարէի Օպէյտի փոխանցեց Անտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պըն Ապտէլ Ալիպի Դամասկոս կատարած այցելութեան արդիւնքները:

ՀԱՐԻՐԻ ԵՒ ՍՅԵՅՐ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի անցեալ շաբաթավերջին այցելեց Տիման, ուր ընդունուեցաւ մարոնիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքին կողմէ:

Դոնփակ հանդիպումին քննարկուեցան երկիրը յուլոյդ ընդհանուր հարցեր, որոնց շարքին՝ յաւելուած արժէքի տուրքի բարձրացումը 10էն 16 առ հարիւրի, ընտրական նոր օրէնքի մը մշակումը, տնտեսական կացութիւնը և էլեկտրաբաշխութեան մարտի դիմագրայած տագնապը:

Վարչապետ Հարիրի անդրադառնալով յաւելուած արժէքի տուրքը 10էն 16 առ հարիւրի բարձրացնելու հարցին, որուն մասին բազմաթիւ կողմեր ծիտական հակադէմոստրաիւն ցուցաբերեցին, ըսաւ, թէ իր կողմէ յայտարարուած այդ դրուիւնը պարզապէս առաջարկ մըն էր, որ տակաւին պիտի ենթարկուի քննարկումի: Ան աւելցուց նաեւ, որ կառավարութեան նիւտերուն ընթացքէն զոհ է և յոյս յայտնեց, որ նիւտերը նոյն դրական մթնոլորտով կը շարունակուին:

Անդրադառնալով Լիբանանի մէջ ընտրական նոր օրէնքի մը ծրագրի մշակումին վարչապետ Հարիրի նշեց, որ Թաէֆի համաձայնագիրը խախտուած է իր կազմած նախկին կառավարութիւններուն իշխանութեան ընթացքին և ևս և յատկանշուած թերութիւններով:

Վարչապետ Հարիրի շեշտեց, որ ընտրական նոր օրէնքի ծրագիր մը մշակելու աշխատանքին մէջ հարկ է որդեգրել Թաէֆի համաձայնագիրին մէջ ճշդուած բոլոր պայմանները: Ան աւելցուց նաեւ, որ պիտի չընդունի ընտրական օրէնքի նոր ծրագիր մը, որուն մկարունքները բոլոր քաղաքացիներուն համահաւասար ձեւով չեն անդրադառնար:

Իր կարգին, Սֆէյր պատրիարքը շեշտեց քաղաքացիին վրայ յաւելեալ տուրքեր չպարտադրելու անհրաժեշտութիւնը և նկատել տուաւ, որ էլեկտրականութեան ընկերութեան պահանջած տուրքի յաւելումը մեծ չէ, սակայն քաղաքացիներուն 75 առ հարիւրը պիտի չկարենայ վճարել, եթէ տուրքը 8000 լ. ոսկիի սահմանը անցնի:

ՈՒՇԱՂՈՒԹԻՒՆ ԱՏԻՅԱՆ ՏՈՒՐՏ

Յովսէփ Աշճեան՝ տրի և տնօրէն ԱՏԻՅԱՆ ՏՈՒՐՏ, մեծ ուրախութեամբ կու գայ հանրութեան ուշադրութեան յանձնելու, թէ ճախնցեալ տարիներու մնաց, այս տարի ևս մեծ 13 Սեպտեմբեր ՏՈՒՐՏ ԳՐՈՍԱՆՈՎ բացառիկ պտոյտ մը կազմակերպած է ղեկի LIMASSOL, KOS, THESSALONIKI, SKIATHOS, RHODOS, LIMASSOL կղզիները և քաղաքները: Նաև ունի վրայ տեղի պիտի ունենայ 2003 զեղուիին և վայելչութեան ընտրութիւն, և այս առիթով բոլոր մասնակցողները պիտի ստանան նուէրներ: Սամալուր յայտագիր, նախաձեռն, ձաշ, ընթրիք ամէն օրը 600 ՏՈՒՐՏ ԳՐՈՍԱՆՈՎ 450 ՏՈՒՐՏ:

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ Ս. ՇՈՒԼԱՆ ՄԱՆԿԱՄՍՈՒՐ

Ս. Շուլան մանկամտուրը կը սկսի Երկուշաբթի, 1 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 7:30էն մինչեւ 5:00 և կ'ընդունի նորեկ մանուկներ հինգ ամիսէն մինչեւ 4 տարեկան:

ՅԱՏՈՒԿ ԴԻՐՈՒԹԻՒՆ ԱՃՆԱՏՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ

Մանկամտուրը ունի յատուկ անձնակազմ, կարող հիւանդապահուիլ և պատասխանատուութիւնը յանձնուած է Ս. Շուլան մանկամտուրի քոյրերուն: Մանրամասնութեանց համար դիմել Ս. Շուլան մանկամտուրի տնօրէնութեան: Դիմումներ (01) 449580, Էլրեֆի: ՏԵՂԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

● ԶՕՐ. ՄԻՇԷԼ ԱՌԻՆ երէկ պատկերասփիւռի «Էլ. Պի. Սի.» կայանին հետ ունեցած հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին անդրադարձաւ երեսփոխան Փիեռ Հըլուի մահով թափուր մնացած Պաապտա - Ալէյ երեսփոխանական աթոռին և 2եշտեց, որ կը մերժէ քաղաքական գործունէութիւնը ծառանկական դարձնելու դրուիւնը և ընդգծեց, որ ինք համաձայն է երեսփոխանական մասնակի և պատրաստ է ընտրութիւններու կայացման, որպէսզի ծառանկական իր ատակ նկատած անձնատուրութիւնը ընտրէ:

«Նորընտիր երեսփոխանը պէտք է ըլլայ բարձր բուն իմաստով ընդհիմադիր և ոչ պետութեան վարակից ընդդիմադիր», ըսաւ Անն:

● ԶԲՕԱՆՇՐԶՈՒԹԵԱՆ նախարար Ալի Ապտալլա երէկ կող ուղղեց ներկայացուցչական կազմութիւնը ամբողջութեամբ և քաղաքացիներուն շարքերը միասնականացնելու, անոնց վրայ յաւելեալ տուրքեր չպարտադրելու գործընթացը: Ապտալլայի նշեալ յայտարարութիւնները կատարուեցան Պաապտա - Ալէյ գրական հանդիսութեան մը ընթացքին: Ան հովանաւորեց նաեւ Իթլիմ Թուֆազի փառաստեղծութեան բացման արարողութիւնը:

● ՎԱՐԶԱԿԱՆ բարեկարգման պետական նախարար Քարիմ Բագրատունի երէկ յայտնեց, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի կողմէ ներկայացուած առաջարկը յաւելուած արժէքի տուրքը 10էն 16 առ հարիւր բարձրացնելու առնչութեամբ տակաւին կը կարօտի քննարկումի: Ան դրադառնալով վարչական բարեկարգումներ կատարելու առաքելութեան Բագրատունի ըսաւ, որ բարեկարգումներու գործընթացը պէտք է ըլլայ ամբողջական, հասնելու համար հաւասարակշռուած վարչական դրութեան:

● ԵՐԵՍՓՈՒՍՆ Մարուսն Ֆարէս երէկուան իր յայտարարութիւններուն մէջ նկատել տուաւ, որ քաղաքացիները կը սպասեն էլեկտրականութեան տագնապին արմատազերծման:

ԿԻԹԱՌԻ ՅԱՏՈՒԿ ԴԱՍԵՐ

● Սուլֆեմ և թորի: Ըն. 03 - 709356:

ԿՈՒՇՈՒԻ

● Շրջուն վաճառող մը. ինքնաշարժ վարելու արտօնագիր ունենալը պայման, ամսական և շահաբաժին: Ըն. 03-290777:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱՄԻՆ

● Ծամբորդութեան պատճառով, Սգեթի սկիզբը, նորակառոյց. 160 քառ. մետր, 3 ննջասենեակ, հիւրարար, ձաշարար, 3 բաղնիք, կեդրոնական երջոնսփիւռն, ջրհոր, ժենիթ, կառատուն: Գեղատեսիլ դիմել: Դիմել հեռ. 01 - 279909:

տական լուծման: Ան նկատել տուաւ նաեւ, որ պետութիւնը իր պատասխանատուութիւններուն և պարտականութիւններուն մէջ թերացում արձանագրած է:

● ԵՐԵՍՓՈՒՍՆ Ուսմի Պաարինի երէկ Ռիհանի իր բնակարանին մէջ իր մամուլի ասուլիսին ընթացքին դիմել տուաւ, որ հարկ է ներկայանալու կացութիւնը ամբողջութեամբ: Ան աւելցուց, որ կը մերժէ Իսրայէլի կողմէ Լիբանանի դէմ կատարուելիք որեւէ յարձակում:

● ՊԱՍԼՊԵՔ - ՀԸՐՄԷԼԻ երեսփոխանական պտուրք երէկ գումարեց արտակարգ նիստ մը, որուն ընթացքին մերժեց քաղաքացիները պատասխանատու նկատելու երկրին մէջ տիրող վարչական փտածութեան և էլեկտրական հոսանքի սակերուն յաւելեալ տուրք պարտադրելու գործընթացը: Պտուրք վստահեցուց, որ էլեկտրական հոսանքի սակերուն ընդհանուր քաղաքացիներուն մեծ վնաս կը պատճառէ և ևս կող ուղղեց ընտրութեան ներկայացուցչական կազմութեան թղթածրարը, բոլոր պատասխանատուները կանչելով հաշուետուութեան:

● ՆԱԽԿԻՆ երեսփոխան Թալալ Մըրիապի երէկ հարց տուաւ, որ եթէ խորհրդարանը կը հրաժարի պատասխանատուները հաշուետուութեան:

տուութեան կանչելէ, եթէ կառավարութիւնը կը թերանայ իր պատասխանատուութեան մէջ և եթէ նախարարները իրարու դէմ ցեխարձակումներ կը կատարեն, ո՞վ է պատասխանատուն: Ան կող ուղղեց կասեցրելու փտածութիւնը, մարմնը և ցեխարձակումներն ու ամբաստանութիւնները:

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նասրալլա Սֆէյր պատրիարքը կիրակի օրուան իր քարոզին մէջ կող ուղղեց իշխանութեան յաւելեալ հոգատարութիւն ցուցաբերելու երկրին ընկերային և տնտեսական կացութեանց նկատմամբ, ինչպէս նաեւ գարգացնելու ծառայութիւնները: Անդրադառնալով Պաապտա - Ալէյ շրջանի հանգուցեալ երեսփոխան Ֆիեռ Հըլուի երեսփոխանական պաշտօնը շարունակելու գործընթացը Սֆէյր պատրիարքը ըսաւ, որ ատակ երեսփոխանի մը դէմ ինք ոչ մէկ հարց ունի:

● ՇԻՒՆԵՐՈՒ ԳԵՐԱՂՈՒ խորհուրդի փոխ նախագահ Շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երէկ կող ուղղեց լուծելու երկրին տնտեսական և ընկերային մարտերու դիմագրայած տագնապները անլուծելով, որ երկրին մէջ քաղաքական կացութիւնը «բաց է», բացի միասնականութեան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ուրախութեամբ կը հաղորդենք, որ Հայ Կաթողիկէ Մետրոպոլիտան Արեւմտեան Վարժարանի թեմի պաշտօնակազմի մանկավարժութեան բաժնում ընդգրկուած քաղաքացիները յաջողութեամբ արձանագրեցին 2002-2003 տարեշրջանի պետական քննութիւններուն:

ԱՖՀԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԱՅԻՆ
ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
AT HOME
• Wheelchair
• Walker
• Electric Bed
• Manual Bed
• Water Mattress
• Cans
• Sticks
• Serum Tripod
• Walking Frame
RENT AND SALE
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
ՅՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ
ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅՇԻՏ ԾԵԼԵ, Բ. ՅԱՐԿ
ԸՆ. (01) 242556/7
NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ
● Տեր և տիկին Անն Զիգմունտի առջին մանկաւարժ մը բախտաւորութիւնը առիթով,
Յարուսին Գարապաճաբեան և ընտանիք
25,000 լ. ո.
Յակոբ Ալլըզեան և ընտանիք
25,000 լ. ո.
● «Ազգակ»ի մէջ լոյս տեսած «Եղբայրս Սամուէլ» յօդուածին առիթով,
Տեր և տիկին Յակոբ Թրաշեան
20,000 լ. ո.
ՀԱԼԷՊ ԱՄԵՐԻԿԱ
ՄԱՀԱԶԴ

Տիրա Վարդան Սվաճեան
Տէր և տիկին Արա և Շէրը Սվաճեան և զաւակունք
Տէր և տիկին Զործ և Սեդա Չամբեան և զաւակունք
Տէր և տիկին Յակոբ Ալլըզեան և զաւակունք
Տէր և տիկին Կարպիս Ալլըզեան և զաւակունք
Տէր և տիկին Վահէ Ալլըզեան և զաւակունք
Տէր և տիկին Կարո Տիւրանեան և զաւակունք
և համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, հօրեղբոր և հարազատին

ԿԱՐԱՊԵՏ ԳԵՆՐԳ ՍՎԱՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Հալէպ, 1924ին)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 8 Օգոստոս 2003ին, Միացեալ Նահանգներ:
Ըստ հանգուցեալի փափաքին, մարմինը պիտի փոխադրուի Հալէպ և պիտի ամփոփուի Հալէպի Հայ Աւետարանական գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահագր:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Վարդան Սվաճեանի բնակարանը, Սիւլէյմանիէ, Հալէպ, Երեկոյեան ժամը 7:00էն 10:00, երեքշաբթի 12, Չորեքշաբթի 13 և Հինգշաբթի 14 Օգոստոսին:

ՄԱՀԱԶԴ

Տէր և տիկին Վարուժան Աճէմեան
Տէր և տիկին Կարպիս Աճէմեան և զաւակունք
Տէր և տիկին Արար Սիւլիմեան և զաւակունք
Տէր և տիկին Յակոբ Աճէմեան և զաւակունք Ալեքս
Տէր և տիկին Նշան Աճէմեան
և համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր, աներոջ և հարազատին

ՆՇԱՆ ԱՃԵՄԵԱՆԻ (Ծնեալ՝ Գիւթահիա, 1910ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 9 Օգոստոս 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 10 Օգոստոս, Կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ժողովրդի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ժողովրդի Ազգային դերեզմանատունը:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահագր:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նաքքաշ, «Աւագեան» շէնք, 2րդ յարկ, Երկուշաբթի 11 և Երեքշաբթի 12 Օգոստոսին:

ԼՕՌԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՄԲ՝ ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ԱՄՈՒՐ ՀԻՄԵՐ՝ ԼՍԻ ԱՊԱԳԱՅԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Ինչպես որ շէնք մը զօրաւոր եւ ապահով է, երբ անոր հիմքը ամուր եւ ու հաստատ, նոյնպէս ալ Ժողովուրդի մը ապահանք երաշխաւորուած է, եթէ անոր հիմքը նորափթիթ սերունդը լաւապէս կազմաւորուած է:

Այս իրողութեան մեծ հաւատք ընծայելով եւ լաւ հիմնուած աշխատանքին մէջ իր ներդրումը բերելու նպատակով, ԼՕՌԻ Շրջանային Վարչութեան ընկերային յանձնախումբը՝ գործակցաբար «Արաքսի Պուլղոնեան» ընկերաբաշխական կեդրոնին ընկերային ծառայութեան բաժանմունքին, լծուած է ժողովուրդի աշխատանքի եւ ծրագրերը մշակած՝ հայ մանուկներուն եւ պատանիներուն դաստիարակութեան եւ կրթութեան համար:

UN International Labor Organization, հովանաւորութեամբ եւ ներդրումով կազմակերպուած այս ծրագրերը կը նպատակադրեն հայ մանուկներն ու պատանիները դաստիարակել այնպիսի ձեւով, որ անոնք կարենան դիմագրաւել ապագայի դժուարութիւնները եւ իրենց ուսման ուղիին վրայ հիմնական քայլերը առնելու քաջութիւն եւ տուեալ ունենան:

Հակառակ անոր որ դպրոցական շրջանն ու դասաւանդութիւնները աւարտած են, ԼՕՌԻ տակաւին կը շարունակէ մնալ խումբ մը հայ մանուկներու ու պատանիներու հետ եւ ամբողջ շրջանին անոնց հետ կը տանի համապատասխան աշխատանք:

Ձմրան շրջանին ամէնօրեայ գրուածքները նորաշէնի կեդրոնին մէջ սերտորոշութիւն կատարող 5 - 13 տարեկան շուրջ 22 հայ մանուկներ ներկայիս կեդրոն կ'այ-



թարկուելու ակունքներու, աչքի եւ այլ հիմնական քննութիւններու, որոնցմէ ետք պէտք եղած դարմանումը կը ստանան:

Այս ծրագրի պատասխանատուն նաեւ կ'այցելէ աշակերտներուն տունները, կը խօսի անոնց ծնողներուն հետ եւ մօտէն կը հետապնդէ անոնց պարագան եւ կարելիութեան սահմաններուն մէջ ոչինչ կը խնայեն թէ՛ աշակերտին եւ թէ՛ ընտանիքին կացութեան բարելաւման համար: Կը կազմակերպուին նաեւ մայրերու յատուկ դաստիարակչական դասախօսութիւններ եւ աշխատանոցներ, որոնք յիշատակաբար կը վերաբերին ընտանիքին, ծնող-զաւակ յարաբերութեան եւ մօր մը առաքելութեան մէջ օժանդակութեան ձեռք բերակրելու գանազան միջոցներու ու ձեւերու:

Ձմրան շրջանին, պատասխանատուն նաեւ կ'այցելէ աշակերտներուն դպրոցները եւ տեսակցութիւններ կ'ունենայ տնօրէններուն եւ ուսուցիչներուն հետ, որպէսզի իրագործուին անոնց կրթական ընթացքին, դժուարութիւններուն եւ ըստ այնմ աշխատի անոնց բարելաւման համար:

Այս ծրագրին կողքին, ԼՕՌԻ իրականացուած է եւ կը շարունակէ իրականացընել ընկերային-տնտեսական պատճառներով կանուխ տարիքի աշխատանքի սկսած պատանիներու ուսուցման յատուկ ծրագրի մը:

12էն 17 տարեկան աշխատող պատանիներուն համար կը տրուին համակարգիչի եւ անգլերէն լեզուի երկու մակարդակի դաստիարակչական դասեր կը նպատակադրեն ուսումնասիրութեան արդիւնքը հայ պատանիները գինեղ անհրաժեշտ տարրական գիտելիքներով՝ անոնց աւելի լաւ ապագայ մը ապահովելու հեռանկարով:

Այս դասընթացքները տեղի կ'ունենան Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային Քոլէճի Ազգային արհեստից վարժարանին մէջ: Ամբողջ շրջանին պատանիները շաբաթ մէկ անգամ կը համախմբուին ԼՕՌԻ «Արաքսի Պուլղոնեան» կեդրոնին մէջ՝ անոնք դաստիարակչական եւ ընկերային գանազան աշխատանքներու կը մասնակցին, վրէժն ու զիտեմ, ինչպէս նաեւ իրենց ընտանիքները եւ իրենց հետաքրքրութիւնները գոհացնող նիւթերուն շուրջ դասախօսութիւններ կը լսեն:

Այս պատանիներէն 14ը, իրենց աշխատանքի մարզին մէջ աւելի եւս զարգանալու եւ հմտանալու համար՝ ԼՕՌԻ հովանաւորութեամբ կը հետեւին ոսկերչական յատուկ դասընթացքներու:

ԼՕՌԻ կեդրոնին մէջ կայ նաեւ 5 համակարգիչով կազմուած սենեակ մը, ուր կու գան աշխատող պատանիները յաւելելու աշխատանքները կատարելու համար: Ընկերային գրասենեակի պատասխանատուներն են կապերը կը հաստատեն այդ պատանիներուն ծնողներուն:



նկուելու եւ գործառնելու հետ, որպէսզի կանխարգիլեն անոնց շահագործումը:

ԼՕՌԻ իր կարելին ու երբեմն անկարելին ի գործ դրած է սերունդներու դաստիարակութեան ի խնդիր, որովհետեւ կը հաւատայ, թէ վաղը կ'ունայ ուշ ըլլալ եւ անհրաժեշտ է, որ մանուկներն ու պատանիները պատասխանատու լինեն անոնց տան այն գէնքը, որուն կառչելով անոնք պիտի պայքարին աւելի լաւին ու կատարելիին համար:

ԵՆՈՒԿԱԿԱՆ ՆՅԱՐ

ԲԱՌ-ԱՄԹԵՐՔԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր կատարածը «առ ի յիտուութիւն» մատնանը չու՛մ մըն է պարզապէս: Գաղտնիք չէ, եւ նոյնիսկ՝ րնական երեւոյթ, որ լեզուները կ'ենթարկուին ազդեցութիւններու, ինչպէս մարդիկը, երբ շփման մէջ կը մտնեն տարբեր գոյովորակներու մշակութային կամ տարբեր շրջանակներու հետ: Մարդ արարածը կը սիրէ նորութիւնները եւ ասիկա իր իրաւունքն է: Լճացած պէտք չէ մնալ, միտքն ու աչքերը հարկ է լայն բանալ, թէ ուրիշներ ի՞նչպէս կ'ապրին, ի՞նչպէս կը խօսին, ի՞նչպէս կը հիւրասիրեն, ի՞նչպէս կը դաստիարակուին: Մասնաւոր մենք՝ հայերս, շատ ատուկ ենք սորվելու, փոխուելու, մեր մորթէն դուրս ելլելու, ուրիշին մորթին մէջ մտնելու: Ահա թէ ինչն է ամէնէն աւելի մենք կը վախնանք համաշխարհայնացում բառէն կամ հասկացողութեան:

Օրինակ՝ կը ներշնչուի՛նք օտար բառերէն/մասնաւորաբար անգլերէն լեզուէն/կը մտնանք այդ բառերու համազօր հայերէն բառերը եւ գանոնք կը փոխարինենք անգլերէնով: Նման բառերու գլխուն վերեւ կանգնած են պայպայր/փոխանակ մնալ քարոզիչ, Օքսթրի/փոխանակ լաւ, սիրով կամ եղաւ ըսելու, օրինքը՝ փոխանակ խմիչք կամ ըմպելի ըսելու եւ այլն:

Բացի օտարաբանութեան գոհ գացած մեր անուշիկ բառերէն, ներկայիս արշաւ մը կայ արեւելահայերէնէն ներսնուելու բառեր՝ արեւմտահայերէնը «զարգացնելու» կամ նորաձեւութիւն ստեղծելու մտադրութեամբ: Այս ձեւեր չի համապատասխաններ անգլերէն լեզուին մէջ կարճ ու կրճատ բառերով միտք փոխանցելու ոճին: Ընդհակառակն, արեւմտահայերէն համեմատաբար կարճ բառերը կ'երկարին յաւելելով վանկերով, աւելորդ նախադասութիւններով: Օրինակի համար, երբ հարց մը քննարկելու առիթ կամ կացութիւն

ստեղծուի / ոճի, յանցագործ փնտռելու եւ այլն/ արեւմտահայերէնը կ'ըսենք: Այս հարցին առնչուած թեմա՛ր ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲԱՅՈՒԱՄ է: Արեւելահայերէնով այսպիսի վիճակ մը կը բացատրուի հետաքրքրութիւնը բառով, նոյն ձեւով նախաքննութիւնը:

Այս պարագային, բառը կ'երկարի երկու վանկով, «հետա»ով եւ «նախ»ով: Ինչն է: Ասոր նման է վերահսկողութիւնը ձեւը, զոր ներկայիս կը հիւրասիրենք մեր բառամթերքին մէջ՝ հետեւելով արեւելահայերէնի երկու վանկով երկարած ձեւին: Որքան որ գիտենք, ՀՍԿԵԼ կամ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ բառերը կը նշանակեն վերջնապարզապէս հսկել: Ի՞նչ իմաստ ունի այս աւելորդ «վերա»ն: Նորութիւն...

Այլ օրինակ. առնենք ԱՌԶԱԿԱՏՈՒՄ բառը / արեւելահայերէն: Չի՛ բաւեր ձԱԿԱՏՈՒՄը, որ յստակ է թէ կը նշանակէ պայքարի, կռուի, ժողովրդական հասկացողութեամբ ճակատ-ճակատի բախում ունենալ: Ինչն է վանկ մը եւս աւելցնենք այս աղուոր ձԱԿԱՏՈՒՄին վրայ... Առատախօսութեան սիրո՛յն...

Առնենք ԳՈՐԾՆԹԱՅ բառը, որ ինքնին տրամաբանական է, յարմար բառ է՝ գործին ընթացքը, բնականաբար ձեւը բնորոշելու համար: Արեւելահայերէն յաճախ կը գործածեն այս բառը, նոյնիսկ՝ տեղի-անտեղի: Արեւմտահայերէնը չէ՛մ չէ եղած այս բառին, որ նորութիւն մը չէ, կ'օգտագործուէր պարբերաբար: Այս բառին համարժեք է երբեմն՝ ՀՈՂՈՒԹԵԱՄ: Այս ձեւեր չի համապատասխաններ անգլերէն լեզուին մէջ կարճ ու կրճատ բառերով միտք փոխանցելու ոճին: Ընդհակառակն, արեւմտահայերէն համեմատաբար կարճ բառերը կ'երկարին յաւելելով վանկերով, աւելորդ նախադասութիւններով: Օրինակի համար, երբ հարց մը քննարկելու առիթ կամ կացութիւն

դեմք ԳՈՐԾՆԹԱՅ:

Քիչ մըն ալ խօսինք ՆԵՐՈՒԹԻՒՆ մասին: Ուժ բառը ուժ չունի՛ր՝ արդեօք, որ դիմած ենք ՆԵՐ նախդիրին: Ուրեմն, ըսենք նաեւ՝ ԱՐՏՈՒԹ: Ինչն է՝ կ'երկար ենք բառերը, կը բարդացնենք բառին միտքը, իմաստը: Անգլերէնէն, ամերիկերէնէն շատ ձեւեր ու բառեր ներածեցինք, ինչն է՝ անոնց կարճ ու կտրուկ խօսեցած ձեւը որդեգրեցինք... Ինչն է՝ այդ ձեւն ալ չենք կապել...

Յիշենք նաեւ ԲԱՅՈՒՂՈՒՄը, զոր շատ սիրեցինք: Մոռացած թերապեւ, մոռացում, անտեսում, աննկատ թողուլ իմաստները, եւ ՄՈՏԱԿ կամ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ կամ ՀՍԿՈՂՈՒՄ՝ հետեւելու համար արեւելահայերէն լեզուամտադրութեան:

Չկրցանք ըմբռնել ՔԱՐՈՂԱՐՇԱԽԻՆ: Չենք գոհացած ՔԱՐՈՂՁՈՒԹԻՒՆ բառով, Ի՞նչ կ'ըլլալ, այդ ալ ընդունինք, քարոզն ու արշաւը միացընենք՝ յանու՛մ ձեւափոխումի: Ու հակառակ անոր որ ԿԱՐԵՒՈՒՐԵԼՆ ալ որդեգրած ենք, կ'ուզենք պահպանել համը ու բոյրը, գոյնն ու դիժը արեւմտահայերէնի ինքնուրոյն հարագատութիւնը:

Վէճի բռնուելի չենք ուզեք, քա՛ւ լիցի, բայց իրողութիւն մըն ալ կայ: Երկու լեզուաճիւղերն ալ մերն են, բայց խառնիճան չկայ, մերինը թողաք լաւ կարիք չկայ: Հարցում մը արդեօք՝ արեւելահայերէնը կարիք չկայ: Հարցում մը կը ներածեն... կը կասկածինք:

Ազդեցութիւնն է՛ր, այո, ժամանակի ընթացքը կը ճշդէ ապի, բայց թոյլատրելի չեն կապուածները մեր բառամթերքէն, մասնաւոր՝ մամուլի մարդիկ եւ բեմասացները, ու կը տեսնենք, թէ նոյնիսկ կարճ պարբերութեան մը մէջ չորս-հինգ յաւելելով վանկերով ԳՈՐԾՆԹԱՅ: Մեղքը այս պարագային այն է, որ մոռցած ենք ՀՈՂՈՒԹԵԱՄը, եւ սխալ տեղ կը գետե-

թը, եւ սխալ տեղ կը գետե-

ԸՆԿԱՆԳՈՒՄ

ԼԻԶՊՈՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ 20ԱՄՏԵԱԿԻ ՆՇՈՒՄ՝ ԹԵՎԵՐԱՆԻ ՄԷՋ

26 Յունիսին Թեհրանի «Արարատ» կեդրոնին մէջ տեղի ունեցած է Լիզպոնի գործողութեան 20ամեակի նշում՝ կազմակերպուած «Գեղարուեստ» յանձնարարական Միութեան:

Միութեան անունով ձեռնարկին բացման խօսք արտասանեց Սեւան Սեֆեան, որ ըսաւ. «Ինչպէս ազատութիւնը անշրջելի ձգտում մըն է մարդ անհատին համար, նոյնպէս ազատագրութիւնն ալ անհատին շարժում է իրաւագուրդ ազդեցուն համար: Հայ Ժողովուրդն ալ չէր բացառուել եւ չի բացառուել յայդ օրինաչափութենէն: Բացմաղարեան, բայց բացմաղարեան հայ ազգին մօտ բնականաբար պիտի բազմապատկուէր ազատութեան տենչը եւ ազատագրութեան ձգտումը: Հետեւաբար, չէր կրնար չբազմապատկուել անոր զոհարարութեան շարքը: Ասոր ապացոյցն ալ Վիտոզի լանջերէնն ու խնամարկն

սկսեալ մինչեւ Լիզպոն եւ դեռ մինչեւ Արցախ երկարող ապստամբական մարտի ընթացքին շարքն է:»

Այնուհետեւ Անֆէլ Միւնասեան եւ Արա Շահ-Պաթեան» Ուսանողական Միութեան:

Միութեան անունով ձեռնարկին բացման խօսք արտասանեց Սեւան Սեֆեան, որ ըսաւ. «Ինչպէս ազատութիւնը անշրջելի ձգտում մըն է մարդ անհատին համար, նոյնպէս ազատագրութիւնն ալ անհատին շարժում է իրաւագուրդ ազդեցուն համար: Հայ Ժողովուրդն ալ չէր բացառուել եւ չի բացառուել յայդ օրինաչափութենէն: Բացմաղարեան, բայց բացմաղարեան հայ ազգին մօտ բնականաբար պիտի բազմապատկուէր ազատութեան տենչը եւ ազատագրութեան ձգտումը: Հետեւաբար, չէր կրնար չբազմապատկուել անոր զոհարարութեան շարքը: Ասոր ապացոյցն ալ Վիտոզի լանջերէնն ու խնամարկն

հային ներկայ իրավիճակը եւ կատարուած քաղաքական կացութեան անդրադարձնելու համար նաեւ Հայ Դատի հետապնդման անցած ուղիին եւ անոր դէմ զոհողութեան մարտահրաւէրներուն մասին:

Օրուան բանախօսի խօսքին յաջորդեց Լիզպոնի խորհուրդը փոխանցող վիտոզի երիցի մը ցուցադրութիւնը, որմէ ետք օրուան պատգամը փոխանիսիկ իւնենիսեան՝ ընկերակցութեան մը Հարմիկ Հախվերդեանի:

Օրուան բանախօսն էր հասարակական հարցը զակցութեան մասնագէտ Բաֆֆի Փիլոսոֆեան: Ան սեղմ գիծերու մէջ ներկայացուց ձեւաւորումի ընթացքին մէջ համաշխարհային:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերու.- 358526, 260115 եւ 241274:

ԶԱՒԱՐԵԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ԶՈՍ)
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԶՈՍԻ Ուսանողական արեւելումի գրասենակը սիրով կ'ընդունի այն հայ աշակերտները, որոնք կը փափաքեն յաւելելու տեղեկութիւններ եւ ցուցունքներ ստանալ համալսարանական մուտքի (քննութիւններ եւ այլն), մասնագիտութիւններու եւ կրթնագաստներու մասին:
Շտաբըրըուները կրնան դիմել Զաւարեան Ուսանողական Միութեան կեդրոն, ամէն Գործընթացի ժամը 5:30էն 8:30:
Հասցէ՝ Պուրճ Բաճուր, Արաքս փողոց, Երեւանեան կեդրոն, 4րդ յարկ
Եր. 01 / 240167

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԼՈՒԹՕ...

Քաղաքակրթության անկախ հանգրուանին ամեն և կարևոր երևույթներն են և վիճակահանությունը՝ իր գաճազան երեսներով և տեսակներով: Իսկ վերջերս լոթոն ստացած է շատ կարևոր հանգամանակ:

Երբ մարդոց միակ երազը եղած է անպայմանորեն հարստանալ, շատ հարստանալ, եւ մանաւանդ՝ արագորէ՛ն հարստանալ, բնականաբար լոթոն կը հանդիսանայ ամեն և կարևոր միջոցներէն մէկը՝ այդ չքանա՛ղ երազը իրագործելու համար:

Մարդիկ հարիր հազարաւոր տոլարներն իսկ բանի տեղ չեն դնէր. հարկ է միլիոններ շահիլ: Մեր մօտ դեռ միլիոններու երազը մեր աչքերուն մէջ շողացնելով, կը լեցնեն լոթոնի սինակները: Պիտի շահիք միլիոններ կամ միլիոններ, պիտի ազատիք աղքատութեան եւ պարտքերու ճիւղներէն: պիտի գնեք շքեղ առանձնատուներ, եսխոթ, օդանաւ, շրջիք պիտի երկրէ երկիր եւ ըլլա՞նք... երջանիկ:

Անցեալ շաբաթ, լոթոնի երկու յաջորդական վիճակաձըգութեան ընթացքին, երկու անհատներ բախտաւորութեան միլիոններու հասնող հսկայական գումարներով: Առաջին բախտաւոր կինը շատ պողարիներէն բախտաւորութեան միլիոններու հասնող հսկայական գումարներով: Առաջին բախտաւորութիւնը, որովհետեւ այդ մէկը մի միայն քանի մը միլիոնով պիտի մեծցնէր իր ընտանիքին արդէն իսկ ունեցած «քաջառողջ» հարստութիւնը: Ծատը շատին քով կ'երթար: Այդ առիթով շատ շատեր դաճանցան եւ դժգոհեցան: Ի՞նչ կարելի է ընել, պէտք է հաշտուիլ այն մտքին հետ, որ գետնուն ջուրերը, վերջ է վերջոյ, ծով կամ ովկիանոս կը հասնին:

Ամերիկան այս մարզին, ինչպէս շատ այլ երևույթներու մէջ անմրցելի գերազանցիկ է: Տեսակ տեսակ վիճակախաղեր կը «ծառայեն» ժողովուրդին: Իսկ Լաս Վեկասը, այս մարզին մէջ, կը մնայ անգերազանցելի մայրաքաղաքը բոլորին, ուր մարդիկ «հիշ թշաղրթ» մատուցի վիճակախաղէն սկսեալ, տեսակ տեսակ այլ բախտախաղեր եւ վիճակահանութիւններ կը փորձեն: Յաճախ բախտը կը դաւաճանէ ասոնց, անոնք իրենց ունեցածներէն իսկ մերկայանալով, կը վերադառնան իրենց տունն ու տեղը:

Ի միջի այլոց, մեր հայրենի երգչուհիներէն մէկը Լաս Վեկասին Գուինետ երգ մը կ'երգէ. զայն կոչելով աշխարհի դրախտ: Ի՞նչ ընէ խելը արուեստագիտութիւն, երբ շարիստան Երկիր Դրախտավայրը կը մերկայացուի դրախտային իր պարունակէն:

Հիմա իմ բուն ըսելիքս այն է, որ Ամերիկա, այսինքն՝ պետութիւնը, հաստատած է ի՛ր լոթոն, որ անմահ բան է: Ասկէ երկու տարի առաջ սահմանեց քսան հիզար միլիոն տոլարի մեծ պարգեւով լոթո մը, որ պիտի շահէր Պըն Լատենին տեղը ցոյց տուողը: Դեռ այս գումարին բախտաւոր տեղը չէ գտնուած: Գումարը կը մնայ վճարելի, իսկ «որսը»՝ անգտանելի: Միայն թէ, այլ լոթոներէ կը տարբերի անոր համար, որ գումարը չ'աճիր: Ատով հանդերձ, մարդիկ կը սպասեն, չեն գիտեր ինչո՞ւ...

Անշուշտ, Պըն Լատենի լոթոն ձրի է. ո՛չ սինակ լեցնել, ոչ ալ դրամ վճարել: Պարզապէս անհրաժեշտ տեղը մատուցողը ընելով՝ կարելի է միլիոններ գրպանել: Թեքսասեան ոճով այս լոթոն, որ պիտի շահիր ողջ կամ մեռած Պըն Լատենի տեղը ցոյց տուողին: Մարդիկ չեն շարժիր: Ասանկ մեծ պարգեւ մը իրացնելը այնքա՛ն վտանգաւոր կացութեան դիմաց կրնայ դնել «բախտաւոր»:

Իսկ նորագոյն լոթոն Իրաքի մէջ հաստատեց թեքսասեան անպարգեւ Պուշ: Ջարմանայի է, ամսական չորս միլիոն իրաքեան պատեհագմին յատկացնող մարդը, միայն քսան հիզար միլիոն տոլար կը խոստանայ վճարել Սատտամի տեղը ցոյց տուողին: Հոս եւս ե՞նթակային ողջ կամ մե-

ռած ըլլալը հարց չէ: Կարելոք մեծագոյն շարագործին տեղը ցոյց տրուի:

Այս լոթոնին մաս կը կազմէին 15 միլիոն տոլարնոց երկու այլ պարգեւներ՝ Սատտամի տղոց տեղը ցոյց տուողին: Եւ այդ գումարները, գոյգ պարգեւները, գտան իրենց միակ տեղը: Ենթակաւ, ընտանեօք, «պահով» տեղ տարուած է: Անցեալ շաբաթուան գլխաւոր իրադարձութիւնն էր այդ լոթոն: Բայց, չեն գիտեր, կարելի պիտի ըլլա՞ն շնորհաւորել բախտաւորը: Երբ պարզ լոթոնի բախտաւորները կը վախճան իրենց շահածը յայտարարելէ, արհուճ շահուած այս նուէրները շահողները, վստահաբար, հազար պիտի չափեն՝ մէկ ձեռնու համար:

Ամբողջ աշխարհի հետաքրքրութեամբ կը սպասէ միւս՝ մեծ նուէրին յայտարարութեան: Ծատ հաւանաբար, շատ երկար սպասելու հարկ չ'մնայ: Վաղը ինքզինք բախտաւորելու կրնայ ելլել իրաքցի մը: Առանց մէկ սենթ իսկ վճարելու, կը շահի մեծ պարգեւը: Իսկ այդ մատուցութիւնը ընողը բնականաբար պիտի ըլլայ Սատտամին մօտիկ անձնատուութիւն մը: Անհատ մը, որ թերեւս անոր՝ բռնատիրոջ արեւով կ'երդնուր օրն օրն օրհնութիւն կը տեղացներ իր տիրոջ գլխուն: Սատտամին միշտ գոյութիւն ունեցած են, ամէն երկրի մէջ: Սակայն բռնատերներ շատ ատելի յաճախակիօրէն գոհ կ'երթան մատուցեան արարքներուն: Իրենց ստեղծած սուտի եւ վախի մթնոլորտին մէջ, միշտ պիտի գտնուին մարդիկ, որոնք իրենց ցուցաբերած հաւատարմութեան եւ նույնիսկ պաշտամունքին ետին, թաքցնեն ատելութիւն եւ սպասեն յարմար պահուն...

Պարոն Պուշ, վստահաբար, իր կարգին, կը սպասէ մեծագոյն պարգեւին, որ կրնայ շնորհուիլ Իրաքի ամեն և բախտաւոր մարդուն: Այդ պարգեւը պիտի ըլլայ... հաւաքական քանդումի զենքերուն յայտնութիւնը: Իրքա՛ն մեծ յոյսեր կ'ապած է ատոնց յայտնուելուն վրայ աշխարհի տէր եւ տնօրէն նախագահը: Երբ յայտնուին անոնք (եթէ երբեք յայտնուին բնականաբար) խորունկ է մեծ շունչ մը պիտի քաշէ նախագահ Պուշ: Պիտի կարենայ իր խիղճը հանգրստացնել, յայտ արար աշխարհին ինքզինք պիտի արդարացընէ: Ծատ բնականաբար, գալ տարի պիտի անրագրէ իր վերջնորոշութիւնը:

Այդ շատ մեծ է շնորհաբաշխ պարգեւէն մաս պիտի հանէ իր ամեն և հաւատարիմ դաշնակից Թոնիին, որուն վարչապետական աթոռը երերալ սկսած է: Ա՛յս, երբ գտնուին հաւաքական քանդումի զենքերը, որքա՛ն պիտի երջանկանայ Թոնին եւ արդարացնէ ինքզինք յայտ Բրիտանիոյ եւ արար աշխարհի: Այն ատեն, թաշնայ եւ բանաստեղծական ձայնով այս քաղաքագէտը պիտի կարենայ բարձրաձայն աղաղակել, փա՛ռք ձեզ հաւաքական քանդումի զենքեր, որ հեքիաթ չէիք եւ արդարացուցիք մեր առած այնքան յանդուրձ ու ցարդ չտեսնուած քայլը...

Մինչ այդ, ո՞սանք կը նախատեսեն այլ պարգեւ մը նախագահ Պուշին, լոթոնի շատ մեծ պարգեւ մը, որ մտոցնել պիտի տալ վերջնամի ահաւոր կացութիւնը, որ շուրջ երեսնամեակ մը ետք, տակաւին ահ ու դողով կը լեցնէ մեծ թիւով ամերիկացիներու սրտերը: Մինչեւ այդ «պարգեւ»-ին յայտարարուիլը, ամերիկացի զինուորներ կը շարունակեն, առօրէն հերթակապով, իրենց արհուճ թափել Իրաքի շիկացած ատմութեան վրայ:

Պատմութեան ասանդած դատերը միշտ չէ որ կ'ընկալին պետական ղեկավարներուն կողմէ, հակառակ իրենց ունեցած լայն կարելիութեանց եւ միջոցներուն:

ՆՅԱՐ

ԻՐԱՔԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՇԱՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԷԿ ԱՅԼ ԵՐԵՒՈՅԹԸ

Իրաքի տագնապը շահու ռազմագործման անհասկանալի ստեղծեց աշխարհի զանազան երկրներուն, բայց մանաւանդ Միացեալ Նահանգներուն համար: Պետական մակարդակէն մինչեւ պետական մարդոց անընթաց քարիւղի, շիրարակական ու արհեստագիտական ընկերութիւններ, դանակները սրած, արդէն իսկ գործի լծուած են (կամ կը պատրաստուին գործի լծուելու) այս դժակը յօշոտելու նպատակով:

Ճեփքա Լինչ ամերիկացի զինուոր մըն է, որ հազարաւոր ճակատագրակիցներու պէս մասնակցեցաւ Իրաքի վրայ յարձակողականին: Մարտի վերջերս, ան յուսարձակները եւ «Ուաշինկթըն Փոսթ»-ի պէս ամերիկեան թերթերու առաջին էջերը գրաւեց, երբ հազարաւոր ճակատագրակիցները եւ իրաքեան ուժերու կողմէ: Նկարագրակա՛նները ազդեցիկ ու տպաւորիչ էին մօտաւորապէս պատմուեցաւ հետեւեալը. ամերիկացի զինուորներու ջոկատ մը Նասիրիա քաղաքի շրջանին մէջ 24 Մարտին զինեալ յարձակումի ենթարկուած է, Լինչ եւ զինակիցները մինչեւ վերջին փամփուշտը կոտուած են, յետոյ դաշոյններով ինքնապաշտպանութեան դիմած են, Ճեփքա ստապամանագրութիւն մը անորոշ ուղղութեամբ: Ի մարմնաւորէ զինուոր Ճեփքա Լինչը: Ժապաւէնին արտագրութիւնը պիտի սկսի այս ամիս, իսկ ցուրտագրութիւնը կը նախատեսուի հիւանդանոցի տեսուի Նոյեմբերին: Ըստ լրատուութեան, ժապաւէնին խորագիրը պիտի ըլլայ «Saving Jessica Lynch» (Ճեփքա Լինչի փրկութիւնը):

ցուցադրուեցաւ պատկերասփիւռի կայաններու կողմէ, զգայացունց նկարագրակա՛նները գրուեցան թերթերու մէջ: Երիտասարդ զինուորը տարուեցաւ Գերմանիա, ըսուեցաւ, որ հոն դարմանումի ենթարկուած է, յետոյ տարուեցաւ Ուաշինկթըն՝ յաւելեալ դարմանումի համար: Ի վերջոյ, ան տուն դարձաւ եւ վարագոյրը իջաւ հերոսական դրուագին վրայ:

Պարզ զինուոր Ճեփքա Լինչ արդեօք օրը օրին անթիւ ունեցաւ կարգալուր իր ողիսականին մասին մամուլին գրածները:

Շատ ալ կարելոք չէ՛նք ուզեր զինք մեղսագրութեան, որուն ծայրերը րացուեցան մօտաւորապէս ամիս մը առաջ եւ սակայն (բնականաբար) պահուեցան յուսանցքներու վրայ, հակառակ «Ուաշինկթըն Փոսթ»-ի մէկ խմբագիրին ձայնասփոռած խոստովանութեան վերադառնալ վարկածը ետք քաշելու լրատու այլ աղբիւրներու (ներառեալ զինուորական լրատուութեան) քայլերուն:

Ա. Մ.

Քիչ մը թարմացնենք մեր յիշողութիւնը:

ՃԻՆՆԱԿԱՆ

Շար.ը՝ էջ 10

ՄԵԾ ԻՐԱԳԱՐՁՈՒԹԵԱՆ

BIG SALE

STORES



Թ-Ի ՇԼՐԹ
6.000 Լ.Ո.



ՆԱԳՈՒՍՏ
8.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
2.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
7.000 Լ.Ո.



ՆԱԳՈՒՍՏ
2.000 Լ.Ո.



ՇԱՊԻԿ
10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
10.000 Լ.Ո.



- ՏԱԲԱՏ 5.000 Լ.Ո.
- ԱՆԹԵՒ ՊԼՈՒԶ 2.000 Լ.Ո.



- ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԵԲԻ
Թ-Ի ՇԼՐԹ 10.000 Լ.Ո.
- ԳԼԵԱՐԿ 2.000 Լ.Ո.



ՏԱԲԱՏ
6.000 Լ.Ո.



ԼԱՅՆԿԱՐԸ ՏԱԲԱՏ
10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
5.000 Լ.Ո.



ՍԱՆՏԱԿ
4.000 Լ.Ո.



ԿՕՇԻԿ
4.000 Լ.Ո.



ԼՈՂԱԶԳԵՍՏ
9.000 Լ.Ո.

BIG SALE BRANCHES

- * **ՀԱՄՐԱ**
ՄԻՆԵՍՍ
ՓԻՔՍԵԼԼԻԻ ԿԻՅ
☎ 01 / 343343
- * **ՆԱՊԱԹԻԷԻ**
ՀՐԱՊԱՐԱԿ
☎ 03 / 949796
- * **ՊԸՐԺ**
ՊԱՐԱԺՆԷ
☎ 03 / 678501
- * **ԱՆԹԻԼԻԱՍ**
ՍԵՆՈՐ St. Elie
☎ 03 / 814161
- * **ՄԱՐ ԷԼԻԱՍ**
CLASS ՎԱՃԱՈՒՍԱՆԻ ԿԻՅ
☎ 03 / 602554
- * **ՅԵՐՆ ԷԼ**
ՇԵՊԷՔ
ՄԻՆԵՍՍ ԱՔԱԼԱ
☎ 01 / 294090

Իրավիճակը Հայաստանում

ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍԱՆԸ՝ ՄՕՏԱԼՈՒՏ

ՄԻԱԳԵԱԼ ՆԱՀԱՆԱԳԵՐՈՒ ՄԷՋ ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԸԱԲԱՏԱՆ, ԹԵ ԱՍՏՈՒԾԱԶՈՒՆՉՈՒ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԼԵԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒ ԾՐԱԳԻՐԻՆ ԸՆԴՊԻՄԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՆՆԵՐ ԿՈՒ ՏԱՅ: ՕԶՍՖՈՐՏԻ ԸԱՄԱԼԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՈՍ ԱՎԵՐ. ՃԱՅԼՁ ՖՐԵՅՁԸՐ ԱՅՍ ՄՍԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐԼՈՒԹԵ «ՏԸ ԿԱՐՏԻՆ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ

ՔԱՆԱՏԱՑԻ ԸԼԼԱԼԸ՝ «ՄԵՂՔ»

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՒՏԱԿ ՏՈՒՆԸ ԶԻ ԸՆԴՊԻՄԱՆՈՒԹԵՐ ԼՐԱԳՈՐԴԻ ՄԸ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ, ԿԸ ՓՈՐՓՐԵ ԱՆՈՐ ԱՆՉԱԿԱՆ ԿԵԱԼՔԸ ԵՒ ԱՅԼՈՑ ՄԻՋՈՑԻՆ ԿԸ ԿԱՍԱՐԵ ԱՆԸՆԹԵՐՈՒ ԱՍԲԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ: «ՏԸ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՓՈՍԹ» ԿԸ ԳՐԵ.



Ճեֆրի Բոֆման կը զայրացնէ Ամերիկայի իշխանութիւնները, երբ կըսէ, թէ ամերիկացի զինուորները բարոյալքուած են Իրաքի մէջ:

Մինչ խաղաղութեան գործընթացին մէջ նոր շունչ կը ներարկուի, Միացեալ Նահանգներու տարածքին կրօնական խմբաւորումներ կը սաստկացնեն ճամբու ծրագրին իրենց ընդդիմութիւնը: Անցեալ Մայիսին Ուաշինգթոնի մէջ կայացաւ քրիստոնէական եւ հրէական «միջկրօնական սիոնական ղեկավարութեան գերատեսիլ-ճանք», որուն նպատակն էր «ընդդիմանալ պահեստինեան ոճրային ահաբեկչութիւնը պետականութեամբ վարձատրելու գաղափարին»: Համագործակցողները կ'ընդդիմանան այլ թեմի ազդեցիկ ներկայացուցիչներ, որոնք ետին կը գտնուէր եկեղեցիներու, ձայնասփիւռի կայաններու եւ «Միջին Արեւելքի պատմութիւն» դասաւանդող Աստուածաշունչի դպրոցներու ամբողջ ենթակառուցք մը:

Հետգտնելու աւելի մեծ թիւով արմատականներ 1997 թ. դարձնելով վեր կը հաւատան, թէ Քրիստոսի երկրորդ գալուստը կ'առնուի Իսրայէլի քաղաքական աշխարհագրութեան: Մոռցէք 1967-ին առաջ գոյութիւն ունեցող սահմանները: Անոնք նկատուի ունին միայն այն սահմանները, որոնք գծուած են Աստուածաշունչի քարտէսին վրայ:

